«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորումը առարկայի դասավանդման գործընթացում*

Առարկան՝ *դասվար*

Հետազոտող ուսուցիչ՝ *Արմինե Արոյան*

Ուսումնական հաստատություն՝ *Ալ. Բլոկի անվան հ. 122 հիմնական դպրոց*

Բովանդակություն

Ներածություն_____3
Գլուխ 1.Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի ընդհանուր բնութագիրը____5
1.1 Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի տարրերը և աշխատանքի կատարման սկզբունքները_____6
1.2 Համագործակցային ուսուցման առավելությունները_____7
Գլուխ 2 Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի մեթոդները և կիրառումը դպրոցում_____9
2.1 Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասավանդման գործընթացում դասաժամին_____11
Եզրակացություն_____18
Օգտագործված գրականության ցանկ_____19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»

Թեմայի արդիականությունը: Ժամանակի հրամայականն է յուրաքանչյուր ուսուցչի հետամուտ լինի ուսուցման գործընթացի կատարելագործման,արդիականացման արդյունավետ ուղիների որոնմանը,ինչը հետաքրքիր կդարձնի դպրոցականների կրթությանն ուղղված մանկավարժական գործընթացը:Այստեղ առաջնային ենք համարում ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ կրթական բարեփոխումների պահանջով առաջադրված համագործակցային մեթոդների կիրառման արդյունավետության ուղիների մատնանշմանը [3]: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ. դրանք պետք է ուղղված լինեն սովորողների ինչպես մտավոր ու զգայական կարողությունների, այնպես էլ ինքնուրույնության, սոցիալականացման և այլ հմտությունների զարգացմանը: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ըստ կիրառման եղանակի ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներն են: Համագործակցային ուսուցման հիմքում տարբեր ուսումնական իրավիճակներում սովորողների համատեղ ակտիվ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գաղափարն է: Համագործակցային ուսուցման, ուսումնառության արմատները հասնում են Ջոն Դյուիի աշխատություններին, որտեղ հեղինակը ընդգծելով կրթության կարևորությունը, այն դիտարկում է որպես ուսուցման այնպիսի մեխանիզմ, որը քաղաքացիներին սոցիալ-ժողովրդական հասարակարգում համագործակցության սկզբունքներով ապրելու ունակություններ է տալիս [6.175] :

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է:

Խիստ կարևոր է իրարից տարբերել ավանդական խմբային աշխատանքը և համագործակցային ուսուցումը:

Ուսուցիչներից շատերն են դասավանդման ընթացքում կիրառում խմբային աշխատանքը, սակայն քչերն ունեն ուսուցման գործընթացում համագործակցային ուսուցման հիմնական տարրերն ու մեթոդները ինտեգրելու համար անհրաժեշտ վարպետություն: Հենց այդ պատճառով, համագործակցային ուսուցումը քիչ է կիրառվում դասարանում, և դպրոցում կիրառվող փոքր խմբերով աշխատանքներն ավելի շատ խմբային աշխատանքներ են, քան համագործակցային ուսուցում[4,18] :

Աշխատանքի նպատակը՝ նախանշել և աջակցել սովորողների մեջ համագործակցային կարողությունների ձևավորմանը նպաստող ուղիների բացահայտմանը:

Աշխատանքի խնդիրները՝

- Ուսումնասիրել համագործակցային տեխնոլոգիայի ընդհանուր բնութագիրը, առավելությունները և թերությունները :
- Մշակել համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառությամբ դասապլան <<Ես և շրջակա աշխարհը >> առարկայի դասավանդման գործընթացում:

Օգտագործված մեթոդները՝ գրականության վերլուծություն, մանկավարժական փորձարկում, տվյալների վերլուծություն:

Գրական ակնարկ

Գլուխ 1.Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի ընդհանուր բնութագիրը

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան 20-րդ դարի 80-ական թվականներից սկսեց ընդհանրացվել և լայն տարածում գտնել: Այս տեխնոլոգիայի ծագման, զարգացման հիմքում ինովացիոն գործընթացներ են, որոնք դիտարկել են մի շարք նորարար-մանկավարժներ՝ Կ.Դ.Ուշինսկին, Ն.Պ.Պիրոգովը, Լ.Ն.Տոլստոյը, Ս.Տ.Շացկին, Յա.Կորչակը, Կ.Ռոջերսը և այլք: Համագործակցային ուսուցման հիմքում տարբեր ուսումնական իրավիճակներում սովորողների համատեղ ակտիվ գործունեության համար անհրաժեշտ պայմանների ստեղծման գաղափարն է: Սովորողները միավորվում են խմբերում, նրանց տրվում է առաջադրանք, ընդ որում յուրաքանչյուրը պատասխանատու է ոչ միայն իր այլև ամբողջ խմբի աշխատանքի արդյունքի համար: Այդ պատճառով էլ ավելի թույլ առաջադիմություն ունեցող սովորողները ձգտում են սովորել: Արդյունքում աշխատում է ամբողջ դասարանը, քանի որ առաջադրված խնդրին միասնական լուծում են տալիս: Փորձը ցույց է տվել, որ միասին սովորելու որ միայն հեշտ է, մատչելի, այլև հետաքրքիր և նշանակալիորեն արդյունավետ: Փոխօգնությունը, խնդիրների համատեղ լուծումը, հաջողության և անհաջողության կիսումը ձևավորում է բարոյական բարձր որակներ, որոնք պետք են ոչ միայն դպրոցում, այլև կյանքում: Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը ուսուցչին հնարավորություն է տալիս ստեղծագործաբար մոտենալ ուսուցման գործընթացին, դասավանդվող առարկային, սովորողներին, նպաստում նրա մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության դրսևորմանը:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է.

- դպրոցականի նկատմամբ մարդասիրական, անձնային մոտեցման ապահովում, քանի որ նպատակային է անձնային որակների համալիր ձևավորումը. կրթադաստիարակչական գործընթացի կենտրոնում երեխայի անձն է,

- ակտիվացնող և զարգացնող դիդակտիկական համալիրի մշակում, որը կնպաստի բնագիտական, առողջապահական, սոցիալական գիտելիքների համակարգի յուրացմանը /ինչ սովորեցնել, ինչպես/, իսկ կրթության բովանդակությունը դիտվում է որպես անձի զարգացման միջոց

- պատճառահետևանքային կապերի բացահայտում, ինչը ձևավորում է որոշակի վերաբերմունք,արժեքներ
- մանկավարժական աջակցում. դպրոցականների հոգեկան և ֆիզիկական առողջությանապահովման պայմանների ստեղծում, հոգածություն յուրաքանչյուր սովորողի անհատական զարգացման համար:

Համագործակցային ուսուցման սոցիալական արդյունքը անձի զարգացումն ու անհատականության ձևավորումն է [2] :

1.1 Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի տարրերը և աշխատանքի կատարման սկզբունքները

Համագործակցային ուսուցման տարրերն են՝

- դրական փոխկախվածությունը,
- դեմառդեմ փոխազդեցությունը,
- անհատական հաշվետվությունն ու պատասխանատվությունը,
- միջանձնային կամ փոքր խմբերով աշխատանքի հմտությունները,
- խմբային գործընթացը,
- փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը /:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի հիմքում խմբերի ձևավորումն է որոշակի մշակված սկզբունքներով:

Համագործակցային խմբերը ձևավորվում են մի քանի եղանակով՝

- համասեռ՝ աշխատանքային կարողությունները համազոր են,
- պատահական՝ խումբը կազմվում է պատահական՝ վիճակահանությամբ, հաշվելով, կտրտված բացիկներով և այլն,
- ըստ հետաքրքրությունների կամ ինքնակամ,
- տարասեռ՝ ընդգրկված են տարբեր՝ ուժեղ, միջին, թույլ կարողություններով աշակերտներ:

Գիտական գրականությունում ներկայացված խմբերի տեսակները բավականին ընդհանրական են, առանձնացվում են խմբերի հետևյալ տեսակներ.

- Համագործակցային ֆորմալ խումբ – փոքր խմբեր են /երկուսից չորս անդամ/, կարող են գործել մեկ դասաժամից մինչև մի քանի շաբաթ և իրականացնել որևէ առաջադրանք: Այս խմբերում աշակերտներն աշխատում են ընդհանուր նպատակի համար: Նրանք պետք է համագործակցեն, կիսվեն գաղափարներով, աջակցեն և խրախուսեն միմյանց:

- Համագործակցային ոչ ֆորմալ խմբեր – ժամանակավոր գործող խմբեր են, որոնց գործունեությունը կարող է տևել մի քանի րոպեից մինչև դասաժամի ավարտը:
- Համագործակցային ուսուցման հենակետային խմբեր - կայուն անդամներով երկարաժամկետ, տարասեռ խմբեր են, որոնց աշխատանքը տևում է ողջ դասընթացի կամ ծրագրի շրջանակներում: Այն ներառում է բացակա ընկերներին աջակցելը, անցած նյութը բացատրելը, օգնել տնային առաջադրանքների կատարմանը և այլն: Խմբում յուրաքանչյուր աշակերտի տրվում է որևէ դեր՝ լիդեր, ընդդիմախոս, նյութերի վերլուծաբան, փորձագետ, դիտորդ, գրառող, կազմակերպիչ, ստուգող/գնահատող, օգնական, խրախուսող, երազող, ժամանակը պահող և այլն:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստում է դպրոցականների մտածական գործընթացների զարգացմանը, նրանք սովորում են լսել, ինքնուրույն որոշումների կայացնել, ընկալել և վերլուծել նյութը, ձևավորում է ինքնագնահատական, համագործակցություն, փոխօգնություն, խնդիրների, կոնֆլիկտների համատեղ լուծման կարողություն [2] :

1.2 Համագործակցային ուսուցման առավելությունները

Համագործակցային մեթոդները մեծ ներուժ ունեն աշակերտակենտրոն ուսուցում կազմակերպելու համար, ինչը ևս կրթական բարեփոխումների կարևոր պահանջներից է [3, 4] : Նշենք նաև, որ ժամանակակից կրթական գործընթացում կարևորվում է ոչ թե պատրաստի գիտելիքի մատուցումն ուսուցչի կողմից, այլ աշակերտին մասնակից դարձնելը այդ գիտելիքի ձեռքբերմանը: Համագործակցային մեթոդները թույլ են տալիս առավել արդյունավետ յուրացնել նոր նյութը, զարգացնել ինքնուրույնության, համագործակցային, հետազոտական աշխատանք կատարելու բազում հմտություններ, օրինակ՝ տեղեկույթի որոնման, հավաքման, մշակման և այլն: Սակայն այդ հմտությունների ձեռքբերումը սովորողների կողմից երկարատև աշխատանքի արդյունք է, իսկ ուսուցչին հնարավորություն է տալիս կատարելագործել, հարստացնել իր մեթոդական մոտեցումները տարբեր խնդիրների լուծման ժամանակ: Այսօր մանկավարժների մեթոդական զինանոցը բավականին հարուստ է, սակայն բոլորովին այլ է դրանց կիրառությունը:

Դիագրամ 1 / https://www.researchgate.net



Գլուխ 2 Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի մեթոդները և կիրառումը դպրոցում

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ:

Ստորև ներկայացնում ենք համագործակցային ուսուցման մի շարք մեթոդներ: Դրանք են՝ աշակերտների թիմային առաջադիմություն, խճանկար, շրջագայություն պատկերասրահում, երեք բանալի և մեկ կողպեք, հինգրոպեանոց ազատ շարադրանք:

1. Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակվել է Ջոն Հոփկինսի համալսարանի պրոֆեսոր Ռոբերտ Սլավինի կողմից: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին:

2. Խճանկար: Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Ներկայացնենք դրանցից մեկը: Աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի: Յուրաքանչյուր խմբին տալ դասի մեկ հատված և աշխատելու համար որոշակի ժամանակ: Այն լրանալուց հետո խմբերը ներկայացնում են իրենց հատվածը՝ կարդում են, բառերը բացատրում, դուրս գրում ուղղագրական արժեք ներկայացնող բառեր, դրանցով կազմում նախադասություններ, կատարում լեզվական աշխատանքներ և այլն: Յուրաքանչյուր խումբ սովորում է դասի մեկ հատվածը, բայց արդյունքում սովորում են ամբողջ դասը՝ դադարեցնելով աշխատանքը և ուշադիր լսելով բոլոր խմբերի պատասխանները:

Կարող է ունենալ նաև փորձագետների խումբ՝ «Ձիգսո 2», որի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում:

3. Շրջագայություն պատկերասրահում: Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր տարիքի աշակերտների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո, համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ, աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

4. Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով: Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս գրել երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար, բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարըԱյս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն:

5. Հինգ րոպեանոց ազատ շարադրանք: Հինգ րոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը [4,5] :

2.1 Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը <<Ես և շրջակա աշխարհը>> առարկայի դասավանդման գործընթացում դասաժամին

Դասարանը՝ 4-րդ

Առարկան՝ «Ես և շրջակա աշխարհը»

Դաս-նախագիծ - «ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՆՑՅԱԼԸ, ՆԵՐԿԱՆ ԵՎ ԱՊԱԳԱՆ»

Դասի նպատակները՝

Ուսուցողական- ամրապնդել «Մեր հայրենիքը» թեմայից սովորողների յուրացրած գիտելիքները, ընդհանրացնել, համակարգել դրանք ըստ բովանդակային ուղղությունների, ներկայացնել մշակութային, ազգային առանձնահատկությունները:

Դաստիարակչական – ձևավորել հայրենասիրություն, քաղաքացիական ակտիվ դիրքորոշում, ազգային ինքնության պահպանման, ձևավորման գործում պատմական հիշողության դերի գնահատում, հանդուրժողականության դաստիարակում:

Զարգացնող – սովորողների համագործակցային կարողությունների և հմտությունների,ճանաչողական ակտիվության, տրամաբանական մտածողության, հոգեկան գործընթացների զարգացում, ազգային և համամարդկային մշակութային արժեքերը վերլուծելու և համադրելու, հաղորդակցական կարողությունների, դիտողականության ձևավորում, ՏՀՏ միջոցներից և մեդիառեսուրսներից նպատակային օգտվելու հմտություն:

Դասի խնդիրները

- համակարգել, ամփոփել Հայաստանի Հանրապետության վերաբերյալ աշխարհագրական, մշակութային, էթնիկ, պատմական գիտելիքները,
- միջառարկայական կապերի օգնությամբ զարգացնել կրտսեր դպրոցականի բանավոր խոսքը, անձնական տեսակետը ներկայացնելու, հիմնավորելու կարողություն,
- ձևավորել
- ձևավորել համագործակցային կարողություններ, միմյանց հետ ներդաշնակ աշխատելու հմտություններ:
- մեդիառեսուրսներով աշխատելու, տեղեկույթի վերլուծության, հավաքագրման, պահպանման և փոխանցման մեդիակոմպետենցիաներ,

Դասի կահավորումը – լուսացրիչ (պրոյեկտոր), համակարգիչ, աշխարհագրական քարտեզ, թեմային վերաբերող նկարներ, նկարզարդ գրքեր, սահիկաշար, տեսանյութեր:

Դասի ընթացքը

«Մեր հայրենիքը» թեմայի ամփոփման համար առաջարկում ենք նախագծի մշակում, որը դիտարկվում է որպես ուսումնական խնդրի ինքնուրույն, հանգամանալից ուսումնասիրում և լուծում: Նախագծում տրամաբանորեն հուզաարժեքային, ստեղծագործական բաղադրիչները փոխկապակցված են, նպաստում են տվյալ նախագծի՝ անձի համար գործնական-կիրառական նշանակության գիտակցմանը և ընձեռում են ինքնուրույն իրականացման հնարավորություն:

Նախագծի իրականացման համար առաջնային է փուլայնության ապահովումը:

❖ **Նախապատրաստական փուլում** հստակեցվել է նախագծի թեման, մշակվել հետազոտական աշխատանքների ուղղությունները, ձևավորվել են աշխատանքային խմբերը: Դեռսև «Մեր հայրենիքը» թեմայի ուսումնասիրաման սկզբում ուսուցիչը նախապես ձևավորել է հենակետային չորս խումբ, որոնք ստացել են համապատասխան առաջադրանքներ: Ուսուցիչը առաջարկել է չորս բովանդակային ուղղություն՝ «Երևանն իմ տունն է», «Մեր մեծերը», «Ազգային երգ ու պար», «Մերօրյա հերոսները»:

❖ **Պլանավորման փուլում** հստակեցվել են տեղեկույթի սկզբնաղբյուրը, մուլտիմեդիոն ռեսուրսները: Որպես վերջնարդյունք յուրաքանչյուր խումբ պետք է ներկայացնի գրավոր կամ բանավոր հաշվետվություն, որը պետք է ներառի՝

- 5-10որոպե տևողությամբ սեփական ուժերով նկարահանված տեսանյութ, հարցազրույց, տեսաշարք, հետաքրքիր դիպաշար,
- փոքրածավալ ստեղծագործական աշխատանք (գրել շարադրություն, հրատարակել պատի թերթ),
- կյանքից վերցված որևէ խնդրի, իրավիճակի քննարկում, լուծման գործնական, տրամաբանական ուղիների առաջադրում:

Այս փուլում ուսուցիչը հստակեցնում է գնահատման ընթացակարգը, չափանիշները, որոնցով պետք է կատարվի փոխադարձ գնահատում, ինքնագնահատում: Գնահատումն իրականացվում է 1-5 միավորներով:

№		«Երևանն իմ տունն է»	«Մեր մեծերը»	«Ազգային երգ ու պար»	«Մերօրյա հերոսները»
1.	Աշխատանքի ներկայացում				
2.	Ստեղծագործական բաղադրիչը				
3.	Նոր գաղափարների առաջարկում				
4.	Գեղագիտական ձևավորումը				
5.	Մեդիա ռեսուրսների և տպագիր մամուլի օգտագործում				
6.	Ինքնագնահատում				

- **Հետազոտական աշխատանքների փուլը** ներառում է ճանապարհորդություն անցյալից դեպի ապագա:

Ուսուցիչ –Հայ ժողովուրդը հավերժի ճամփորդ դառած քայլում է դարերով, կերտում պատմություն, ստեղծում մշակույթ, քաղաքակրթություն: Մեր արմատները հասնում են մինչև Արմանի, Հայասա ու Նաիրի, մեր փորձությունները տասնյակ դարերով են չափվում:

Գևորգ Էմին ՄԵՆՔ…

https://www.youtube.com/watch?v=PoCk7UhbzpU

Համաձայն եք հետևյալ ձևակերպման հետ:

Առաջադրանք

Հիմնավորեք Ձեր տեսակետը՝ ավարտելով հետևյալ նախադասությունները.

- Հայենիքը սկսվում է .....
- Ես ուզում եմ, որ իմ հայրենիքը ...
- Ես գիտակցում եմ, որ հայոց լեզուն ...
- Ես երախտապարտ եմ իմ հայերնիքին ...
- Հայրենասեր լինել նշանակում է ...

Ուսուցիչ – Սիրելի՜ աշակերտներ, այսօր մենք հավերժի ճամփորդ դառած մի անմոռանալի ճանապարհորդություն կկատարենք մեր անզուգական հայրենիքի պատմական անցյալում, հերոսական ներկայում և կքայլենք դեպի լուսավոր ու հաղթանակած ապագա:

Մեր ճամփորդության առաջին կանգառը.

ՃԱՄՓՈ՜ՐԴ, Ո՞ՐՆ Է ՄԵՐ ԵՐԿԻՐԸ...

ՈՐՆ Է ՄԵՐ ԵՐԿԻՐԸ...

- «Իմ երկիրն այն է, որ գտնվել է Բիբլիական Արարատ լեռան ստորոտում, առասպելական դրախտի տեղում...
- Այն երկիրը, որի հողը դարեր շարունակ ոռոգվել է դառը քրտինքով և նոր է միայն մարդուն տալիս դարերով կուտակած իր քաղցրությունը...
- Առասպելական Վահագնի պես եղեգան փողի հրից ու բոցից ծնված այն երկիրը, որը դարերով տառապել է պատերազմների չար կրակներից և նոր է միայն ջերմանում գործարանների ու հնոցների բարի հուրերից...
- Հնոց մագաղաթների ու գրքերի այն երկիրը, որն իր երեսունվեց տառերի խիզախ ջոկատով դարեր շարունակ դիմադրել է իրեն ձուլել ու ոչնչացնել սպառնացող բոլոր ոսոխներին...
- Այն երկիրը, որի, սկզբում լեռների մեջ կորած, իսկ ապա՝ օտար ափերում կռունկի պես թեածող երգը հիմա հասնում է արար աշխարհին...»:

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

Փոխներգործուն առաջադրանք /տրվում է 5-7րոպե/ – յուրաքանչյուր խումբ, օգտագործելով մուլտիմեդիոն ռեսուրսներ, պետք է ներբեռնի ՀՀ որևէ պատմամշակութային հուշարձանի, տեսարժան վայրի վերաբերյալ մեդիատեղեկատվություն և ներկայացնի: Այսպիսի առաջադրանքները նպաստում են մեդիատեղեկատվական հոսքում արագ կողմնորոշվելու, անհրաժեշտ նյութերն ընտրելու, սեփական մտքերը համակարգված և հստակ ձևակերպելու կարողությունների ձևավորմանը: Կարևոր է նաև սովորողների համագործակցությունը աշխատանքի ընթացքում:



Աշխարհագրական քարտեզի շուրջ անհատական աշխատանք. ցույց տալ ՀՀ մարզերը, մարզկենտրոնները: Կարելի է օգտագործել ինչպես էլեկտրոնային տարբերակ, այնպես էլ պատի քարտեզներ: Որից հետո ուսուցիչը խոսում է մեր պետականության խորհրդանիշների մասին:

- **Նախագծի եզրափակիչ փուլն** սկսում ենք ձեռքբերած գիտելիքների ամփոփմամբ:

Ամփոփիչ հարցեր

1. Ինչպե՞ս է առաջացել մեր երկրի անվանումը:
2. Որո՞նք են ՀՀ պետական խորհրդանիշները:
3. Ի՞նչ է պատկերված մեր զինանշանի վրա:
4. Ներկայացրե՛ք ՀՀ դրոշի գույները ,և ի՞նչ են դրանք խորհրդանշում:
5. Պատմեք ՀՀ մարզերի, մարզկենտրոնների և ընդհանրապես քաղաքների մասին:
6. Նկարագրե՛ք ձեր սիրելի քաղաքը, նրա գույները, մարդկանց ապրելակերպը և այլն:
7. Ո՞րն է Հայաստանի մայրաքաղաքը, ո՞վ է այն հիմնադրել:

Այս կանգառում աշխատանքը եզրափակում ենք կատարված աշխատանքի արդյունքների ներկայացմամբ, եզրակացությունների ձևակերպմամբ և արդյունքների ամփոփմամբ:

Այդ նպատակով անհրաժեշտ է դիտել, քննարկել բոլոր կազմված խմբերի համագործակցության արդյունքում ստեղծված մեդիաարտադրանքը՝ տեսանյութ, փոքրածավալ ֆիլմ, հարցազրույց և այլն:

Ըստ հետևյալ չափանիշների.

- համագործակցություն
- ինքնուրույնություն
- գլխավորի տարբերակումը երկրորդականից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ Համագործակցային ուսուցման տեխնոլոգիային առանձնահատկություններից է այն , որ մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ:

- ✓ Այն հնարավորություն է ընձեռում զարգացնելու համագործակցային բազմազան հմտություններ , որոնք անհրաժեշտ են խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

- ✓ Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառմամբ աշակերտների մոտ զարգացան՝ ստեղծագործական և համագործակցային կարողությունները , ճանաչողական, հետազոտական հմտությունները:

- ✓ Համագործակցայի ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը նպաստեց դասարանական լավ կոլեկտիվի ձևավորմանը, բարդ իրավիճակներում կողմն- որոշվելուն, աշխատանքային խնդիրները ինքնուրույն լուծելուն, ինչպես նաև առողջ ու երկարակյաց հայորդիներ մեծացնելուն: Աշխատանքը նպաստեց աշակերտների ինքնագնահատականի բարձրացմանը, տարատեսակ բարդույթների հաղթահարմանը և սեփական վարքագծի կառավարմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արնաուդյան Ա., Օհանովա Ի., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Սեմինար պարապմունքների ուղեցույց, Ձեռնարկ ուսումնական ծրագրեր մշակող մասնագետների համար, ԱՅՈԵՔՍ, Երևան, 2002, 272 էջ:
2. Ասատրյան Լ.Թ. Հակոբյան Գ.Հ., Ասատրյան Մ.Ա., Գևորգյան Մ.Մ., Կարապետյան Ն.Զ., Բաղդասարյան Ա.Ա., Մանկավարժություն, Եր. Արագերս, 2017:
3. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան Ա., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., «Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ», Ձեռնարկ ուսուցիչների համար, ԱՅՈԵՔՍ, Երևան, Տիգրան Մեծ, 2004, 319 էջ:
4. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, 96 էջ:
5. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ.,Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, «Անտարես» հրատ., 2006, 123 էջ:
6. Վարդումյան Ս., Ձաղինյան Ն., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, «Նոյյան տապան» հրատ., 2005, 402 էջ:
7. https://www.yerevan.am/am/park
8. https://blognews.am /
9. https://www.researchgate.net